պէտ և հայեցողութեանց ասպարիզէն դուրս չեն ելլեր, սակայն մարդկեղէն մտաց մեծ պարծանք են. եւքը այն մանր գիւտերը, որ յարատև երկայնմտութեան պտուղ են, որոնք թէպէտ և մեծ օգտակարութիւն մըն ալ չըսեն, կամ թէ գիտնական մեծ յարգ մըն ալ չունենան, միշտ կը ծառայեն գիտութեան անջատեալ մասունքն իրարու հետ զօդելու, կամ անոնցմէ զօմանս կատարելագործելու, և կամ լաւ ևս ճանչնալու ու դասաւորելու էակաց բազմաթիւ շարքը:

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Պալլաս ճանապարհորդ և երկրաբան: — Բեդրպուրկի գիտութեանց ճեմարանը 1835ին փափագ մը ցուցուցեր էր Պալլաս անուանով երեւելի բնախօսին ու ճանապարհորդին արձան մը կանգնելու Երուսաղէմ անոր գերեզմանին վրայ: Պեռլինի գիտութեանց ճեմարանը սիրով ընդունեցաւ այս առաջարկութիւնս, ու արձանը կանգնեցին: Այս արձանն է գորցի ոճով 7 ոտք բարձր կարմիր կրանիտէ կոթող մը, բարձրը գափնիէ պսակ մը փորած, վարը Պալլասայ կենդանագիրը մարմարեայ մեծ մետալի մը վրայ, ու անոր տակը արձանագրութիւն մը:

Պալլաս երեւելի երկրաբան ու ճանապարհորդ է. և 1741ին ծնաւ Պեռլին ու 1811ին մեռաւ: Երբ անցեալ դարուն երկրորդ կիսոյն ատեղաբաշխք Սիպերիա կ'երթային արուսեկին արևուն վրայէն անցքը դիտելու, Պալլաս ալ անոնց ընկերացաւ. մանրամասնաբար քննեց Սիպերիան, Տաւրիան, Ռուսիոյ այլ և այլ կողմերը, ինչուան Չինու սահմաններն հասաւ, ու եաքէն Բեդրպուրկ դարձաւ իր դիտողութիւններն հրատարակելու: Լերանց ձեւանալուն ու երկրագնտիս պատահած փոփոխութեանցը վրայ 1777ին Բեդրպուրկ գիրք մը տպած է, որուն մէջ արդի երկրաբանութեան ճշմարիտ հիմունքները կը դնէ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Իտալիոյ բնակչաց թիւը: — Թագաւորութիւն Սարդենիոյ, 3099 հասարակութիւնք և 4,916,084 բնակիչ. Թագաւորութիւն Լոմպարտիոյ և Վենետկոյ, 2922 հասարակութիւնք և 4,916,347 բնակիչ. Իշխանական Դքսութիւն Պարմայի, 530 հասարակութիւնք և 495,204 բնակիչ. Հասարակապետութիւն Դիտանոյ Նաւհանգին (Իտալական Զատիկի), 262 հասարակութիւնք և 129,313 բնակիչ. Դքսութիւն Բարմայի, 105 հասարակութիւնք և 511,969 բնակիչ. Դքսութիւն Մոտենայի, 72 հասարակութիւնք և 606,139 բնակիչ. Մեծ դքսութիւն Դոսկանայի, 246 հասարակութիւնք և 1,817,166 բնակիչ. Տէրութիւն Հռովմայ, 3490 հասարակութիւնք և 2,940,000 բնակիչ. Թագաւորութիւն երկուց Սիկիլեայց, 2177 հասարակութիւնք և 8,616,922 բնակիչ. Գորսիգա կղզի (Գաղղիոյ իշխանութեան տակ), 354 հասարակութիւնք և 236,251 բնակիչ. Մալթա կղզին (Անգղիոյ իշխանութեան տակ), 6 վիճակ և 124,924 բընակիչ:

Ընդ ամէնը 13,263 հասարակութիւնք և 25, 310,319 բնակիչ:

ԴՐԱՄԱԿԱՆ

Գաղղիոյ դրամոց թիւը: — Գաղղիոյ դրամոց թիւն էր 1661ին, Գոլպէրի պաշտօնէութեան ատեն, 600 միլիոն ֆրանգ. 1708ին Նիկողայոս Տէմարէի պաշտօնէութեան ատեն, 800 միլիոն ֆրանգ. 1751ին Սեշէլի ատեն, 1,600 միլիոն ֆրանգ. 1828ին՝ Պուրպոնեանց իշխանութեան ատեն, 2,300 միլիոն ֆրանգ. 1832ին՝ 3,383 միլիոն ֆըրանգ. 1841ին՝ 4,600 միլիոն ֆրանգ. իսկ հիմա 6,000 միլիոն ֆրանգէն աւելի է, որ է ըսել 26,400 միլիոն գահեկան Տաճկաց: Եւրոպիոյ մէջ Գաղղիա ամէն երկիրներէն աւելի պղինձ, արծաթ ու ոսկի դրամ ունի. ոչ Անգղիա, ոչ Ռուսաստան և ոչ Գերմանիա՝ Աւստրիան ալ մէկ առած Գաղղիոյ չափ դրամ ունի:

ՊԱՐՏԻԶՊԱՆԱԿԱՆ

Անհոտ բուսոյ մը անուշահոտութիւն տալ: — Խտալացի պարտիզպան մը վերջերս յաջողեր է անհոտ բուսոյ մը անուշահոտութիւն տալ: Ինքը որ և իցէ անհոտ բուսոյ մը անուշահոտութիւն տալու համար այն բուսին արմատը կամ սերմը ուզած ծաղկին եղին մէջ թրջոց կը դնէ, եաքէն կը չորցընէ ու ժամանակին կը տնկէ:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ